

ՏԱՌՈՒՄ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՐԹ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

Կը Հրատարակուի Շաբաթը մի Անգամ

ԲԱԺԱՆՈՐԳԱԴԻՆ

Պուրկարիոյ համար տարեկան	10 ֆր.
» » վեցամսեայ	5 »
» » եռամսեայ	4 »
Արտատահմանի համար տարեկ.	12 »
» » վեցամսեայ	6 »
ՎՃԱՐՄԱՆՈՒՄ ԿԱՆԻՍԻԿ	

Նամակ, ծրար, եւ այլ պէտք է դրկել հետեւեալ հասցեով

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Տէր և խմբագիր Տաւրոս շաբաթաթերթի

Х. Чакрянъ
Редакторъ на вѣстникъ
„ДАВРОСЪ“
Варна България
Отговорникъ Н. Драгулев

H. TCHAKERIAN
Rédacteur du Journal
DAVROS
Varna (Bulgarie).

ՊԱՅՄԱՆՔ

Խմբագրութեան եկած գրութիւնք կը հրատարակուին մասամբ կամ ամբողջութեամբ : Հրատարակուած ու չը հրատարակուած ձեռագիրներ ետ չեն արուիր : Մանուցման տողը 20 տնթ. : Երեքէն աւելի անգամներու համար զատ սակարկութիւն : Մանուցմունք կ'ընդունուին ամէն լիզուա :

Ա. ՏԱՐԻ

ԵՐԵՎԱՆԻ 17 ՓԵՏՐՎԱՐ 1898

ԹԻԻ 4

ՈՒՂԵՒՈՐԻ ՄԸ ՅԻՇԱՅԱԿԱՐԱՆԵՆ

ԱՂԵՏԱԼԻ ՅՈՅՑ ՄԸ

Սեւ, տնող՝ ճակատագիր մը կայ հայուն համար. ներկայ արեւնայի դարը կարծես անոր խորշումով ճակտին վրայ «բու անէձքը» ցոյցն է և ահաւոր վճիռը դրոշմայ :

Յոյցեր կազմեցին Պոլսոյ մէջ և արձակ համարձակ ըսինք. «Թըքա-կան խնէշ կաւաւարութեան ան-կումը մեր ցոյցերով պիտի ըլլայ» :

Յոյցեր կազմեցինք բոլոր գաւառական անկիւններու մէջ և 200,000 արիւնայեղ կոտորածներէն յետոյ կրցինք խաբել, ըսելով. «Ժողովուրդը ցոյցերով կ'սթափի, ժողովուրդը ծանր թմրութեան մէջ է, հետեւաբար տաղել պէտք է անոր մարմինը, պատուել, դուրս քաշել պէտք է անոր մարած սիրտը. վերջապէս արիւն, փրատակ ու ջարդ պէտք են . . . »

Ահա՛ անուրանալի, ահաւոր, ժա-հալից խոտաւանութիւն մը. սա-կայն ի՞նչ եղաւ արդիւնքը . . . է՛հ, արդիւնքը կը թաղանք ապագայի մը, որուն վրայ Աստուած միայն կը նայի :

Բայց զթալի՛ բան. ցուցամուր-թեան տեղը կարծես կուրցուցած է մեզ, որովհետեւ այսօր ալ Պու-կարիոյ ամեն քաղաքներու մէջ կը կատարենք այդ ցոյցը : Սօֆիա գըտ-նուած միջոցիս, զարմանքով ուշա-դիր եղայ այդ պզտիկ գաղութին մէջ տիրող երկպառակութեան, որ քիչ մնաց ցոյցի մը կը հանգէր : Փառք Աստուծո՛ւ, կ'երեւի որ այդ տեղ ցուցամուրթէն աւելի, քիչ չաա խօսք հասկցող մարդիկ կան. առանց յիմարութեան վերջացուցին գործը :

Երկուօր է Ֆիլիպէ կը գտնուիմ : Հսեցի որ վարդանանց տօնախմբու-թեան առթիւ փոքրիկ հանդէս մը պիտի կատարուէր վարժարանին մէջ : Առտուն բարեկամիս հետ ե-կեղեցի գացինք : Յետոյ խուռն

բազմութեան մը հետ վարժարան մտանք, որուն ալ տօնախմբութեան օրն էր : Երկու սեսէ հոծ բազմու-թիւն մը լեցուած էր ամբողջ արահը : Գրեթէ անշուք զարդարանք մը վարդանի պատկերը կը նսեմացնէր :

Հետզհետէ ճաւեր, արտասանու-թիւններ և երգեր բուռն ծափա-հարութեամբ ընդ ունուեցան : Վար-ժարանի աէօրէնք քանի մը հսկիւրճ բայց գրեթէ ճշշումի մը տակ ձեւ-ուած, չափուած խօսքեր ըսաւ, ու-րոնց պատճառը յետոյ խմայցայ. միջահասակ, ուժգին կերպարան-քով ու անվահեր դէմքով երիտա-սարդ մըն ալ գրաւոր բաներ մը խօսեցաւ. վերջապէս վարդանի փոքրիկ մէկ պատկերը յօրինուած թատերգութեան մը ձեւին տակ ներկայացուեց յետոյ, յեղափոխա-կան մը բեմին վրայ ելաւ և բաւա-կան լուրջ, երբեմն կծու տկնարկ-ներով խառն՝ որոնք մեր յեղափո-խականներուն բերնին մէջ արդէն յատուկ դարձեր են, հանդէսի մը համար պատշաճ խօսքեր ըրաւ : Ա՛լ հանդէսը վերջացած էր : Խորին բայց անուշ ապաւորութեան մը տակ էին ամենքն ալ : Շատեր այնքան յաւուրեցան, որ սկսան արցունքներ թափել : Վարդապետը բեմին վրայ ոտը դրաւ որ հանդէսի վերջաբանն ալ ինքը զրուցէր, ահա՛ յանկարծ պարոն մը բեմին վրայ կեցնէ :

Ո՛վ Տէր Աստուած, ի՞նչ զայրոյթ, ի՞նչ ատելութիւն, ի՞նչ վրէժխնդ-րական ահաւոր ձայն մը . . . ամ-բողջ հանդիսականները սկսան դու-ղըղալ, բերնէն զարհուրելի պար-բերութիւններ կը ժայթքէին, իսկ նայածքէն՝ մարդկային աչքերու մէջ չը տեսնուած բոց մը :

Եւ ահա՛ հետեւանքը . . . մերը մանուկը մոռցաւ : Կրկնեաւ սար-սափը, մանուկներու ճիչն ու աղա-ղակը, երկու հակառակ կուսակ-ցութիւններու սպառնական ձայնը . . . ամենքն ալ ահաւոր տեսարան մը կը ներկայացնէին :

Ինչո՛ւ համար . . .

Այդ բանախօս պարոնին ըսած-ներէն կը հետեւեցնեմ թէ ժողովրդին մէջ գտնուող պարոն մը Արմէնիա կուսակցութեան համակիր ըլլալուն համար, այդ լրագրին մէջ կծու յօդուած մը սուեր է զոր դժբաղ-դարար չէի կարգացեր :

Բայց խնդիրը հոգ չէ. չարիքը պատրաստուած գէնքերու աղետալի խորհուրդներուն մէջ է : Երկու կող-մէն ալ գէնքով, վեց հարուածներով ու կատաղի կռիւ մը մղելու որոշու-մով եկեր լեցուել էին հոն : Արդէն վարժարանի երկու ուսուցիչներու դէմ գրեթէ անվայել, խայտառակ ու անբարոյականի մը հանգամանք ունեցող ակնարկութիւններ եղան, սակայն անոնք խոհեմութիւն ըրին ու չը պատասխանեցին : Վերջապէս կռուի, բանակուելի ու խառնիճա-ղանճ բազմութեան աղաղակին հետ վեց-հարուածի մը ձայնը լսուեցաւ : Պո՛ւմ . . . պո՛ւմ . . . պո՛ւմ . . . դուրսէն ալ, ներսէն ալ . . . Ոս-տիկաններ, օգնութեան համար վազող օտար ազգեր . . . ա՛լ ի՞նչ ըսեմ : Ես երթալուս հաւատա՛ որ զղջայի :

. . . Մանրամասնօրէն չեմ ուզեր լեցունել Ձեր Պատ. Թերթին սուղ էջերը, որովհետեւ ամեն տեղէ, ա-մեն անկիւնէ, ամեն քաղաքէ և ա-մեն երկիրներէ միեւնոյն կատակեր-գութիւնը կը լսուի և միեւնոյն տուամը տեղի կուենայ, ուր որ երկու տունէ աւելի հայ կայ :

Պէ՛ մարդ Աստու, ի՞նչ է ձեր ուզածը. մի՞թէ Թուրքիոյ մէջ կա-տարուած ցոյցերը հոս պիտի չարու-նակուին որ մեր ունեցած քիչ մը ազատութիւնն ալ վրայ տանք և Ռուսաստանի Բէժիմին տակ մանե-լու ստիպուինք : Է՛հ, ասիկա գար-չելի բան է . . . Իրաւ որ ազատու-թեան իղձ մը չէ, այլ ներքին երկ-պառակութիւններ, որոնք գուցէ ծնունդ պիտի տան ցաւալի պարա-գաներ ունեցող ապագայի մը :

Ի՞նչ հարկ կայ այդ սրբազան հանգէսին մէջ, այդ քան խուռն

բազմութեան մէջ և այդ պիտի նուի-րական մարդու մը առջեւ ելնենք վարժարանի մը ծրագիրներու վրայ խօսինք. ելնենք Արմէնիա թերթին մէջ գրուած մէկ յօդուածին համար ա՛յնքան զայրոյթներ թափենք եւ պօսանք. «Դուք ի՞նչ իրաւութեամբ Դաշնակցութեան վրայ յարձակում էք . . . նրանք գործում են . . . նրանք արիւն թափում են . . . եւ ո՛չ թէ Մարտիրոսի աղաւտ փողոց-ներում սլքտացող խմբագրին պէս 13 տարիներէ ի վեր ազգը խաբել են . . . » :

Ա՛լ ամօթ է. բաւական է ժողո-վուրդի սրտին վրայ խոր վէրքեր բանալիք, հիմակ ալ մանաներ չը ցանենք :

Ահա՛ իմ ամփոփ եզրակացու-թիւնը :

Թերեւս այս անտեղի ցուցամու-մերութիւններ, մեր կարգ մը յե-ղափոխականներու միահեծան գա-ղափարներ և մեր նկարագիրներու մէջէն դուրս ժայթքող երեւոյթներ մինչեւ հիմայ կը փոխուէին, եթէ ժամանակին Ձեր Պատ. Թերթին պէս անկողմնակալ թերթեր ըլլային : Ի՞նչ է այս, Աստուած իմ, հանողը գրեթէ «ական» մը կը կապէ մատին, քանի մը արիւնոտ պարբերութիւն-ներ կը գտնէ գրքերու մէջէն եւ անգամ մը ծափահարուելէ յետոյ, փրկիչ մը կը դառնայ :

Է՛հ, Տաւրո՛ս, աչքդ բաց, սթափ-ուէ՛ վայրկեան մը, դուն պէտք ու-նիս պողպատէ կուրծքի մը՝ որուն տակ բաբախուն սիրտ մը թրթռայ, դուն պէտք ունիս վահանի մը՝ որ ջախջախող, քանդող և կոտորող ըլ-լայ ճշմարտութեան համար :

Ահա՛ իմ իղձը բու առաջին քայ-լերուդ նուիրումը :

ԱՆԿՈՂԱՆԱԿԱԼ ՄԸ

1898 Փետրվար 14.

Փ. Պոլիս :

Հետեւեալ ուշադրութեան արժանի նամակը՝ որ կը գրէ իր մէկ բարեկամին, անձնութեան մարմնացումն եղող գաւառացի հանրահաշիվ Յեղափոխական մը, կը յանձնարարենք կարգաւ մեր ընթերցողներուն:

13 Յունիս. 1898.

Սիրելի ընկեր

Ձեռք գիտեմք քեզ ալ ինչ պատճառներ արգելք կ'ընեն ըլլալ որ այսչափ կուշացնես նամակներդ, որոնց անհամբերութեամբ կ'սպասեմ: Արդեօք դո՞ւն ալ մոռցար մեզ, վարակուելով անստորբերութեան այն ախտէն որ շատ մը նամակներ կուտակեցական սին ու վրեժ մէջներով բռնուած է կըսեն արտաստահմանի հայ եղբայրներու համար:

Արդէն գաւառներուն մէջ չկայ տեղ մը ուր հայրը համոզուած չը լինի թէ Եւրոպայ խորթ մօր մը պէս լքած է մեզ, և Մոսկովան կան իշխանութիւնէն հիւսիս չափ բարիք սպասելն անստորբերութեան գաւառացի հայութիւնը առաջունէ շատ աւելի լաւ որոտնադրութիւններ ունի դէպի յեղափոխական գաղափարը:

Կ'ապշինք ու կը զարմանանք որ, արտաստահմանի մէջ ապրողները փոխանակ գործին աւելի մեծ զարկ մը տալու, կուտակեցական երկպառակութեամբով ու սնտախ վէճերով կը զբաղին, ձգելով որ գաւառացի հայութիւնը արեւմտ ճահիճներու մէջ խեղդուի և փճանայ ազգին բոս վանդակ գոյութիւնը: Անուանական Միութիւն մը մէջ նետած ժողովուրդը անով զբաղեցնելին, ասանկ օրհասական ժամու մը մէջ անհատական վէճերով ու նկատումներով, ժողովուրդեան քար գայթակղութեան դառնային, ի հարկէ մեծ ցաւ պատճառած է ամեն անոնց որ այդ նպատակին եղբայրներ, քոյրեր ու զաւակներ զոհած և տակաւին շատեր բանաբու անողորմ փականքներու տակ, նողկալի մթնոլորտներու մէջ հիւժախառնութեամբ դառնալով, մահուան դատաւնիքը ճակատին տնկելով կը յառաջանան գերեզման, անէծքներ թափելով անոնց գլխուն որ գործը լքելու ու վիճեցնելու պատճառ կ'ըլլան:

Թո՛ղ ձգեն այդ ազգակործան վէճերը, խնդիր չէ թէ միացել են կամ ոչ, մենք հոս արդէն մէկտեղ կը ջարդուինք Հնչակեան թէ Դաշնակցական ու համոզուած ենք թէ մէկտեղ գործել պէտք է հարկ եղած պարագային: Միութիւնէ աւելի ջանացէք գործին ծրագիրը փոխել տալ, ու այս անտեղի ցոյցերը դադարեցնելով աշխատիլ, ուժ գոյացնել յարմար պարագայի մը համար, միանուագ ու միաժամանակ կերպով ընդհանուր ապստամբութիւն մը յարուցանելու (որչափ կարելի է):

Գործին վնաս հասցունող այնչափ չէ եղած անմիութիւնը, որչափ ան-

տեղի ու անժամանակ ցոյցերը: Գիտես որ ես կուտակեցութիւն չեմ սիրեր ու երկու կողմին հետ ալ լաւ առնչութիւններ ունիմ: արդարութեան պարագ կը համարիմ ըսել որ, եթէ Դաշնակցականները որոշ ուղղութիւն ու գործի անպայման յաջողութեան կատարեալ ծրագիր մը ունեցած ըլլային, կազմակերպութիւններ միանալէն շատ աւելի գերազանց էր, բայց այս խակ ցոյցեր իրենց վարկը կտորեց ամեն տեղ:

Այսօր իմ թղթակցած երեք չորս քաղաքներու ուր Դաշնակցականները առաւելութիւն կը կազմեն, ամենքն ալ առ հասարակ կը դատապարտեն ցոյցերն ու իրենց վարիչներու անուրջ ուղղութիւնը: Կը կրկնեմ, գործը վիճեցնողը ծրագրի չգոյութիւնն է, զայն ստեղծելու միջոցներուն վրայ խորհեցէք: Իրաւ, շատ լաւ է, բայց ի՞նչ կ'ընէ այն Միութիւնը որը պիտի հաստատուի այս հիմնովին յաւ ծրագրին վրայ:

Մեր խելացի, հաւուստ ու դիւանագէտ մասը ալ որ օրերու կը սպասէ, մի՞թէ ասիկց աւելի օրհասական, աւելի պարտաւորեցուցիչ պարագայ մը կ'այլ զայն գործածելու համար: Ինչո՞ւ կ'սպասեն որ ժողովուրդը կամ այս ու այն կուտակեցութիւնները հրաւիրէ զիրենք: Ձե՛ն զգար թէ պարտաճանաչութեան վերջին ժամն է որ կը հնչէ ու ամեն ոք որ հայ է, պարտաւոր է առանց հրաւերի ստպալէզ գալ ու տալ իր ունեցածէն:

Առանց դրամի խելքը ու առանց խելքի դրամը օգուտ չընենք, և այս երկուքը կը գերազանցեն անձնութեան ոգին: Մեր արտասահմանի եղբայրները փոխանակ վէճերով զբաղելու թո՛ղ բերեն առաջին երկուքը ու երկրորդը մեզմէ սպասեն, մենք ամեն վայրկեան պատրաստ ենք զայն տալու:

Մնամ

ԿԱՅՏԱԿ ՊԵՅԼԵՐԵԱՆ

..

Վերոյգրեալ նամակին շահեկան ու անկողմնակալ հանգամանքները կ'ստիպէին այնպիսի թերթի մը մէջ հրատարակութեան տալ որ բոլորովին զերծ ըլլայ կուտակեցական նշանակութեան ու պաշտօնական հանգամանքէ: Շարժումի զեկոյցին հաւատարմ, յարմար նկատուեցաւ անոր յանձնել, սակայն մեծ եղաւ զարմանք երբ փորձով տեսայ մասնաւոր խորագիր Շաւարշի Դաշնակցութեան մոլի անդամ մը ըլլալ (1):

1. Սխալ էր հաւատալը թէ «Շարժում» կուտակեցական նկատումներէ ազատ ու անկախանգ ուղղակի ժողովուրդին թերթն ըլլալու կոչումն ունի եւ չափէ գուրա աւելորդ տեսնելով ապշելով, որ հակառակ այդ հաւատքին Դաշնակցականներու պոռոն կը չափէ, որուն շունդակց ու վրան բաց մեղեդիներն իր առաջին թիւէն սկսեալ խուլբուռն աւանդներն իսկ թնդացուց:

Մենք Դաշնակցութեան դէմ մինչեւ ցարդ թշնամական ոգւով բան մը ըսած ու գրած չըլլալով, անգամ մ'ալ խօսքը չը խելաթիւրուելու համար կը կրկնենք թէ, նամակին հրատարակութեան համար եղած վիճաբանութիւնը ճշմարտութեան մը ծածկոցը վեր առնելուն իրենց հոս գնեցին ուղղակի այդ պարունը իր մաշկէն դուրս բերելու համար է, որ հասկնայ թէ ամեն մարդ իրեն պէս տանձի կեղեւ չուտեր: Նամակը ամենեւեւ երկու խումբ թաղ իրենցուն, ըսինք:

— Պարոններ, կը հաճի՞ք այս նամակը հրատարակել առանց կէտ մը փոխելու:

— Չ'կայ պարբերութիւն մը որ արգելք ըլլայ, բայց որոշ պատասխանը վաղը տան եւ մէկին կրնանք տալ:

Հասկցուեցաւ որ բացակայի մը բովէն անցնիլ պէտք էր. հետեւեալ օրը հոն գտանք Պ. Արուսիսի՝ գրասեղանին գլուխը և երկու խմբագիրները վար ու կողմնակի նստած:

— Բարի լոյս, ի՞նչ որոշում տրուի:

Շաւարշ — Այո՛, պիտի հրատարակենք երբ ձգէք որ երկու պարբերութիւնները հանենք:

— Աւելորդ է կրկնել թէ չկրնար փոխուիլ, սակայն կուզեմ գիտնալ թէ որո՞նք են այդ ձեր խրաչած պարբերութիւնները:

Շաւարշ — Եղբայր, նողկալի բառ մը կայ, ատիկա լուտանք է:

— Ներեցէ՛ք, պարոն, նողկալին միջոցաւորն է, մարդոց չէ. իրական արգելքը ըսէք ու զիս համոզեցէ՛ք, թերեւս փոխել ձգեմ: Շաւարշ ձեռքը Դաշնակցութեան դէմ եղող պարբերութիւններուն տանելով:

— Հրատարակուելու համար ահաւաստիկ ասոնք վերնալ պէտք են:

— Անկարելի է, դուք թերթին բացարձակ տէրը ըլլալով, իրաւունք չունի՞ստիպել որ հրատարակէք, սակայն իբր ազգային անհատ մեկնայն ատեն իրաւունք ունիմ ըսելու թէ Ձեր «Ո՛ր է և կուտակցութեան չենք պատկանիլ, և բոլոր կուտակեցական եւ ոչ-կուտակեցական գրութիւններու առջեւ մեր խմբագրատունը կռնիկ վրայ բաց է» ի պաշտօնական զեկոյցը վերուցէք ու ժողովուրդը բացարձակ կերպով խաբելու չափ առաջ մ'երթաք. աւան թերթ կը հիւրընկալէ ասիկա. Ձեր չհրատարակելուն պատճառները չեմ կրնար հասկնալ, ըսել է զեկոյցը ծածկոյթ մըն է:

Շաւարշ — Շատ լաւ, ի՞նչ գիտես դու և նամակագիրը թէ Դաշնակցութիւնը որոշ ուղղութիւն չունի և ցոյցերը խակ էին:

— Պարոն, մարգարէ ըլլալու պէտք չկայ և կը զարմանամ որ, նամակագիրը չէք ճանչնար ու ինչէն գիտնալ կը հարցնէք այս առաջին ցոյցին վնասակարութեան գեռ Համոզուելիկ, երկրորդ՝ գոյծի յարմար ծրագրի չգոյութիւնը, եր-

րորդ՝ ապացոյցներն են թէ գործին վրայ իսկ գաղափար չունիք և նամակագիրն փորձառութեանը քով շատ տկար մէկն էք:

Պ. Արուսիս — Նամակագիրը ինձ լաւ ծանօթ է բայց ասիկա անոր գիրը չէ:

— Ընդօրինակութիւնն է, եթէ կը ճանչնաք ահա գիրը:

Պ. Արուսիս — Բայց առանց կարգաւ չեմ կրնար համոզուիլ թէ Դաշնակցութեան մասին ուղղակի այս գաղափարները ունի:

— (Նամակին Դաշնակցականներուն վերաբերող մասը բանալով) կարգացէ՛ք:

Պ. Արուսիս — Արգարեւ նամակագիրը ինձ ծանօթ, շատ կարեւոր ու փորձառու մէկն է բայց իր յատուկութիւնը, ծանր հարցեր վճռելու աւելի քովութիւնն է, կրնայ հարկը մարդով հազար մարդ ջարդել, բայց ոչ ցոյցն ու մեր ուղղութիւնը քննադատել, ես ալ անոր ըրածը չեմ կարող ընել:

— Որովհետեւ չէք խոստովանիր անոր մտային կարողութիւնը Ձեր դէմադրած ըլլալուն համար (Դաշնակցութեան) չեմ վարանիր ըսել թէ ծանր հարցեր ըսելով ցոյցերը կուզէք ակնարկել, որ ժողովուրդը փճացնելէ զատ օգուտ մը չունեցաւ:

Արշաւիր — Պարոն, ինչպէս ըսինք մեր թերթին մէջ հակակուտակեցական, անհատական ու կուտակցութեանց դէմ յարձակման տեղ չկայ:

— Ուրեմն զեկոյցը վերուցէք, ժողովուրդը մի՛ խաբէք, և Պ. Արուսիսի համար ալ գոցուած թող ըլլան ձեր թերթերը: Չարքեանը Դաշնակցութեան դէմ գրելուն, Պ. Արուսիսի կողմէ անոր դէմ անհատական ակնարկութիւններ կ'ըլլան ու տեղ կը կենայ. իսկ երբ խնդիրը ձեր դէմ ու բովանդակ ճշմարտութիւն ըլլայ, առաջին օրը բաց է և կէս հաճութիւն կուտաք, բայց երկրորդ օրը գոց է ու պարբերութիւններ պակսեցնել հարկ ըլլայ (2):

Շաւարշ — Ըսել է ձեզ Չարքեանը զրկեց որ թերթիս դէմ խաղ մը խաղաք (3):

2. Մենք չենք յիշեր երբեք որ, «Շարժում» մէջ Պ. Արուսիսի անուն մէկը մեր անձին դէմ ակնարկութիւններ ըրած ըլլայ: Եթէ ըլլար այդպիսի հանրային հանգամանքէ գուրկ ստոր բան մը, շատ կանուխ ստացած կը լինէր հոսկէ հոնկէ «վարձք կատար» հազար ու մէկ շնորհաւորութիւններ, որչափ ալ ինք պահուելով ուղէր «համեստութեամբ» այլ եւ այլ անուանց ծածկոցներուն տակ:

3. Շաւարշ ինքն ալ գիտէ, որ մենք մութին մէջ գործող անեղակներէն չենք եւ ոչ ալ — կը հասկնամ — մէկին անունն աղարտելու համար 15 տանթիմ ալ փոստի ծախս վճարելով, ազաչանաց նամակներ գրող ցածիւրէն...: Մենք կը խօսինք բաց ու որոշ, ինչ որ է մեր գաւառները եւ այսպէս եղած է սկիզբէն ի վեր առանց մտաբար մէջ մը մէկին եւ մէջ մ'ալ միւսին չնորհել: Եւ դուք Պ. Շաւարշ «գիտակցաբար» կարող էք այսօր ըսելու թէ այս կարգի անձանց անուններն արձանագրութեան տեղ մնացած է այլ եւս: «Հնչակ» եւ «Երօշակ» տոմարներուն մէջ, Կ. Ս.

— Պարոն, շատ առաջ մ'երթար, Չաքրեանի հետ գործ չուներիմ և ոչ ալ այդպիսի պաշտօն մը կ'ստանձնեմ։ Չաքրեանի հետ գաւաղափարնս իրար կը հակասեն եւ նոյն իսկ գաղափարի կռիւ մըած եմ հրապարակաւ։

Շաւարշ — (Դիւահարի մը պէս բարբոթած, մարդկութենէ դուրս անպարկեշտութեամբ յարձակելով) Դուք դաւաճան մըն էք թերթիս դէմ, Հնչակեաններու և կամ Չաքրեանի կողմէ եկած էք, ելէ՛ք դուրս, քիչ մը առաջ ալ կըսէիք թէ Հնչակեաններուն դէմ ըլլայ, անմիջապէս կը հրատարակէք։

— Դաւաճան դուն ես Պարոն, որ առ ժամայն սուտ մը հնարեցիր ու ձեռքդ դէնք կրնես, զրպարտիչ, ի՞նչ ապացոյցներով Հնչակեան ըլլալս կամ Պ. Չաքրեի կողմէ գալած ըլլալս գիտցար, կը հազա՞ն թէ կը խօսիս, կը լսէ՞ք Պ. Արուսի, Պ. Կիւրճեան, ի՞նչ սուտեր կը հնարէ, ի՞նչ ամբաստանութիւններ կ'ընէ։

Պ. Արուսի — Չէ, Շաւարշ, կը սխալիս. անիկա՝ Հնչակեաններուն դէմ ըլլայ կը գրէք, չըսաւ, այդ ամբաստանութիւնը մի՛ ընել։

— Պարոններ, հոգ չէ, այս նաւակը հրատարակող թերթ չը պակսիր, միայն ժողովուրդը խաբելու միջնաք. եւ Պ. Շաւարշ ես դուրս ելլելէս վերջ, այս մարդիկը պիտի ըսեն քեզի թէ դու ի՞նչ ես, և ո՞ր չափ անվայել բրտութեամբ վարուեցար, անոնք ալ Դաշակցական են բայց մարդ են ու մարդու պէս կը խօսին ու ներուած սահմանէն անդին չեն անցնիր։

Մենք ու եւ կուսակցութեան չենք պատկանիր, ասիկա կը հաստատեն երկու կողմն ալ. ճշմարտութեան այս սողերը և նախկին պարունակութիւնը վեր հանելով ժողովրդեան կը թողնենք դատողութիւնը։

Պ. Շաւարշի ալ խորհուրդ կուտամ, որ ձգէ խմբագրութիւնը որ իրմէ շատ բարձր գործ է. մէկ երկու տարի եւս դպրոց երթայ ու պարկեշտութիւն սովորի վիճաբանութեանց մէջ ներուած սահմանը չանցնելու, և ճշմարտութիւնը բացարձակ չժածկելու։

Մ. ՆԵՐՍԻՍԻԱՆԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԷ
(Անցորդի մը օրագրէն)

1898 Յունվար 23
Պուրկաղ
Ա.

Տխուր տպաւորութիւններու տակ կը թողում այս քաղաքը։ Պուրկաւրիոյ այն ամէն քաղաքներու մէջ, ուր քիչ կամ շատ թուով հայեր կան, շարունակ երկպառակութիւններ, դաւադրութիւններ, ներ-

քին անտեղի կռիւներ՝ որոնց պատճառը միմիայն անձնական ստորոխակալութիւններ, վերջապէս խաղաղ ժողովուրդի կեանքը վրդովող մեքենայութիւններ անպակաս էին, սակայն այս նշանաւոր քաղաքը մինչեւ տարի մ'առաջ «կոյս» մնացած էր և կրնար պանծալ իր ժողովրդական անդորր կեանքովը։

Բայց սա ճակատագիրը չը թուլաց որ այս քաղաքն ալ մնայ իր հարազատ արեան մէջ։ Թոյնը թափուած էր, և քիչ տունէն անդգալի յառաջդիմութիւն մ'ունենալով, իր ազդեցութիւնը հասաւ վերջապէս մինչեւ շնչերակը...

Ինծի պատմողը շատ սեւ գոյնելով նկարագրեց պատճառները, զորս ես զանց ընելով կը թողում աւելի յարմար ժամանակներու մէջ գրել մանրամասնօրէն։

Այդ թոյնը քանի մը «Ազատ կուսակցութեան» պատկանող պարտնէն էին թափած ժողովրդի աւմենէն թշուառ դասակարգի սրտին մէջ, այն դասակարգին՝ որ իր ցուերը, իր վիշտերը, իր աւերակները, իր անմոռանալի կորուստները, իր օրհնատեան ճիչն ու տառապանքներն ունի...

— Ինչու խաղաղ մնայ այստեղի ժողովուրդը, երբ իր մէջ ճահիլ ճիւղան յեղափոխականներ կան։ Պէտք է փոխուին թաղականներն, որոնք ջոշ-Ալաններէ կազմուած են, պէտք է դուրս նետուին հոգաբարձուներն՝ որոնք տիրապետող կուսակցութեան համար խուճկ ու մոմ չէին ծխեր. պէտք է դուրս վաճառուին տասը տարիէ ի վեր լռիկ մընջիկ աշխատող և քիչ շատ փորձառու ըլլալէ աւելի լուրջ գաղափարներով տոգորուած գաղապարները, որոնք չէին աշխատել որ վարժարանի մէջ խումբեր կազմուին եւ Հայոց պատմութեան սեղ ժամանակակից հերոսներու պատմութիւնը աւանդել մատաղ սերունդին...

Ու ասանկով մեր «ազնիւ» յեղափոխականները որոնք քանի մը հոգիէ կը բաղկանային, մտան ժողովուրդի մէջ։ Իրենց նշանաւորն էր. «Աշխատի՛ր որ անդակն գործերը կուսակցութեան անդամներու ձեռքն ինչային...»։

Բայց դժբաղդաբար չեն յաջողած։ Եւ միայն պարտութիւնը չէ որ կրած են, այլ նաեւ իրենց վարկին անկումը կը տեսնեն որ ճիշդ իւղը հատած լաբարի լոյսին կը նմանի։

Հոս պարտք կը համարիմ յիշել այդ պարտներու պարագլուխը։ Այս անձը Պոլսէն քիչ ժամանակ է որ դուրս նետուած է և կուզէ որ բան մըն ալ ինքն ընէ՝ գէթ արտասահմանի մէջ։ Կ'ըսեն թէ ժընձէվ գացել է, յետոյ վիէննա բաւական երջանիկ օրեր անցուցած է, վերջապէս Սօփիայէն ինքզինքը փ. Պոլսի Ազնուամեծար Գօմիթէթի գիրկը բաց գտնելով, հոն նետել է ինքութեամբ լեցուած... Ի՛հ, կե՛ր, ա՛րը և ուրախ լըր. կեցցէ՛ Շաքէի կանանց ընկերութիւն, որ

մօտ 70 ոսկի դրած է այդ պարտնի տրամադրութեան տակ...

ԼԵՈՆԵՅ

Խնդութեամբ կը հրատարակենք հետեւեալ շնորհակալեաց գիրը, մեր կողմէն ալ աւելցնելով որ, նոր ու առաջինը չէ Տիար Համբարձում Մ. Յարութեանի առատաձեռնութիւնը եւ եթէ իր ծանուցեալ համեստութիւնը ներքէր, մենք մեծ հաճոյքով կրնայինք արձանագրել այս տողերու մէջ յիշաւրդն շատ մը ուրիշ բարեգործութիւններն ալ, որով բաղմիցս ապացուցած է իր անկեղծ հայրենասիրութիւնը եւ իր անվիճելի առաքելութիւնը։

517 փետր. 1898 Սիլիսդրէ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Անկեղծ պարտականութիւն մը կը զգանք ներկայիս յայտնել մեր խորին շնորհակալութիւն առ Մեծ. Տիար Համբարձում Մ. Յարութեան, նախագահ Սիլիսդրէի Հայոց ընթերցարանի որ, իր ազգասիրական բուն եռանդով, անձանձիւր ընթերցարանիս յառաջդիմութեան ու նիւթական բարեւարութեան համար ջանք չը խնայելէ ետք, իր սուվերական վեհաձեռնութեամբ՝ այս անգամ եւս չորս ազգային թերթեր ու քառասուն ֆրանք կանխիկ դրամի հետ վեց հասոր ալ կարեւոր գրքեր նուիրեց ընթերցարանիս։

Իրօք, գուցէ այս նուէրը ոմանց համար այնքան նշանակալութեան արժանի չը թուի, բայց մեզ համար խիստ մեծ ու գնահատելի է, այն միակ պատճառով որ, այդ ազնիւ անձի դէպի յառաջդիմութիւն ու հանրութիւն տածած հազուագիւտ տեղը ու ազնիւ գաղափարը ի յայտ կը բերէ։

Խնդրենք ուրեմն, Տէր խմբագիր որ այս սողերը Ձեր Պատ. Թերթին մէջ զետեղելով բարեհաճել թարգման լինել մեր անհուն շնորհակալութեանց, որով մնամք յարգանք ի դիմաց վարչութեան Սիլիսդրէի։

Ազգ. Ընթերցարանի

Վ. Ատենագպրի Ատենագետ
Յ. ՓԱՓԱՋԵԱՆ Դ. Պ. ՆԱՋԱՊԵՏԵԱՆ

ՄԵՐ ԲԱՐՔԵՐ

ԵՐԵԱԿ ՆԻՋԱԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ

Հանրատուն ենք։ Գինիէն վերջ փիլիսոփայութիւն ըսած է Մեծ բանաստեղծը և ասոր նուիրած իր երգերուն էն ջղուտը և ամենէն խանդավառը։ Գինիէն վերջ կին կը գոչենք մենք։ Եւ այն իրապաշտներուն պէս, որ

օդին հետ բնաւ գործ չունին, կնոջ հաճոյալի փիլիսոփայութիւնը գեւրադաս կը համարենք ամենէն եւ անոր կ'աշակերտենք երկրաքարշ գերիներու պէս, երբ մանաւանդ վարդապետն օտարուհի մ'է, բողմը...

Այն, կեցցեն ուրեմն մեր հին պատուելիներ որ այս առթիւ առանց խաղալու վերացական բառերու հետ, կամ աւելի որոշ խօսելով, առանց զանազանելու պարկեշտը անպարկեշտէն, աստուածացուցեր են ընդհանրապէս կինը՝ Աստղիկ և անոր բնակավայրը Տաճար Ասրդկան յորջորջելով։

Եւ մենք՝ ահա հոն ենք...

Շքեղ տուն մը՝ որ պալատէ աւելի աշխարհ մը կ'արժէ. փոքրիկ սենեակ մը՝ որ տաճարէ աւելի դրախտ մը կ'արժէ. եւ հոն հիւանալի յաւերժահարս մը՝ որ հրեշտակէ աւելի աստուած մը կ'արժէ։

Ի՛նչ աւելի հաճոյք և միլիթարութիւն մեզ համար, որ եթէ ճանչցած ենք աշխարհի ունայնութիւնը, միւս կողմէն ալ անաւել թողած չենք մեր լայն մաքերուն մէջ դժոխք կոչուած միջնադարեան գաղափարի մը մուրն ու մրուրը։

Դժոխքը թո՛ղ պատժէ ամեն աւանդ, որ անոր պանական վախճան համակուած, կը տառապին արդէն չարաչար աշխարհի մէջ։

Ունայնամիտներ, ահա արքայու թիւնը, ահա հրեշտակները, ալինչ չու՛ կ'զբաղուէք սատաններով եւ ձեր կեանքն իրապէս դժոխք կը դարձնէք։

Կան մարդիկ, որ հազար կ'արժեն ըսուած է։ Կան վայրկեաններ, որ տարիներ կ'արժեն, կ'ըսենք։

Եւ արդարեւ հիացումի, պաշտումի այն վայրկեանները, ուր ծունը դրած և ձեռքերնս օդին մէջ տարածած, պաշտելի էակի մը աէրն ըլլալէ աւելի անոր երջանիկ գերին ըլլալու անզուպ տեսչանք կը մոռնանք մեր անհատնում վըշտերը և մեր տառապանքները, այդ խանդաղատանաց վայրկեանները, կ'ըսենք, չե՞ն արժեր միլիթամբ բողջ կեանք մը, որ այլապէս յաւիտենական տանջանք մը պիտի դառնար մինչեւ գերեզմանին անյագ ու սեւ փոսը։

Եւ միթէ փոսէն դէպի աշխարհ, և արտասուքի, լացի աշխարհէն դէպի խայտառքի ու խնդութեան սանդուղը վերելքներ չե՞ն վայելման այդ ամեն մէկ վայրկեանները, ուր մոռնալով կը թեթեւանք մեր վշտերէն և թեթեւալով կը վերանանք երջանկութեան բարձունքը, ահագին անշրպետ մը բանալով մեր և ողջախոհութեան յիմար աշաւերտաներուն միջեւ և այն ու վախն անոնց՝ ու վայելքը մեզ բաժին թողելով։

Թող տուէ՛ք ուրեմն, որ Եկեղեցին՝ սուգի, ողբի այդ լալկան մոռնետիկն իր նիհար ու խաղաղ վարդապետութիւններով և Բարոյական փիլիսոփայութիւն կոչուածն իր չոր

Կը վաճառուի Վառնա Արիւնդեան տուրան, 2 րդ. թաղ, թիւ 1104: